Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1341[2]-27.02.2012-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 20-ի ՀՕ-308 օրենքի 42-րդ հոդվածում՝

1) լրացնել 1.1-ին մաս հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Եթե *Հանրապետության Նախագահի հրամանագրի հրապարակումից հետո*՝ 3 ժամվա ընթացքում քվորում չի ապահովվում, ապա նիստը սկսվում է անկախ քվորումի առկայությունից:»,

2) լրացնել 3-րդ մաս հետևյալ բովանդակությամբ՝

«3. *Արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանն ուղղված միջոցառումները քննարկվում են սույն օրենքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով, հետևյալ բացառություններով՝*

ա) հիմնական զեկուցմամբ հանդես է գալիս Հանրապետության Նախագահը կամ նրա ներկայացուցիչը.

բ) հարակից զեկուցումներ չեն լինում.

գ) քննարկումն ավարտվում է Հանրապետության Նախագահի կամ նրա ներկայացուցչի եզրափակիչ ելույթով՝ առանց որևէ փաստաթուղթ ընդունելու:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ Ի Կ
«ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՄԱՍԻՆ», «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը,գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	**Առարկության, առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխություններ**
1.	2.	3.	4.
ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Լ.Ալավերդյան Ա. Բախշյան Ս.Սաֆարյան Ա.Մարտիրոսյան Զ.Փոստանջյան	1. «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդվածի 1-ին մասում ավելացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Արտակարգ դրության ընթացքում չի կարող սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի, դատարանների և Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը:»:	Ընդունելի է	1. Համապատասխան փոփոխությունները բովանդակային առումով կատարված են «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 7-րդ հոդվածի 3-րդ մասում:
	1.1. 2-րդ մասից հանել «ներառյալ» բառը, «վտանգ է սպառնում» բառերից հետո դնել բութ, հանել «անօրինական» բառը:	Չի ընդունվել	1.1. Ըստ ՀՀ Սահմանադրության, արտակարգ դրություն հայտարարվում է ՀՀ սահմանադրական կարգին սպառնացող վտանգի դեպքում: Այդ առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով թվարկված դեպքերը սպառիչ չեն և որևէ օրենքով հնարավոր չէ սպառիչ սահմանել ՀՀ սահմանադրական

			կարգին սպառնացող վտանգների սպառիչ ցանկ:
	2. Նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ մասում «սահմանված կարգով» բառերից հետո գրել «՝ Սահմանադրության 81-րդ հոդվածում ամրագրված լիազորությունն իրացնելու համար:»:	Չի ընդունվել	2. Լրացման անհրաժեշտությունը չկա, քանի որ հիշյալ դրույթն ուղղակիորեն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ:
	3. Նախագծի 4-րդ հոդվածում		3.
	ա) 1-ին մասի 8-րդ կետում «օրը» բառից հետո գրել «ժամը» բառը,	Չի ընդունվել	ա) Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասում Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիրն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, եթե Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրում ուժի մեջ մտնելու ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ: Իսկ հիշյալ հրամանագիրն ուժի մեջ է մտնում միայն հանրային հեռուստատեսությամբ, հանրային ռադիոյով, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակման պահից: Գտնում ենք, որ հրապարակման ժամի վերաբերյալ ճշգրիտ կանխատեսումներ անելն իրատեսական չէ:
	բ) ավելացնել նոր 3-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ. «Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրում չի կարող նախատեսվել որևէ	Չի ընդունվել	բ) առաջարկվող լրացման անհրաժեշտությունը չկա, քանի որ առանց նշված դրույթը նախագծում լրացնելու էլ ՀՀ Նախագահի ցանկացած հրամանագիր համաձայն ՀՀ Սահմանադրության

	դրույթ, որը կարող է հակասել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված սահմանադրական կարգի հիմունքներին:»:		56-րդ և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածների չի կարող պարունակել որևէ դրույթ, որը կարող է հակասել ոչ միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված սահմանադրական կարգի հիմունքներին, այլև ՀՀ Սահմանադրության մյուս բոլոր դրույթներին և օրենքներին:
	4. Նախագծի 7-րդ հոդվածի		4.
	ա) 1-ին մասի 15-րդ կետը հանել,	Չի ընդունվել	ա) առաջարկությունն անհասկանալի է և հիմնավորված չէ.
	բ) 3-րդ մասում «և ՀՀ Սահմանադրական դատարանի» բառերից հետո գրել «, ՀՀ Սահմանադրական դատարանի և դատարանների» բառերը:	Ընդունվել է	բ) Նախագծի 3-րդ մասում «ՀՀ Սահմանադրական դատարանի» բառերից հետո լրացվել է «, ՀՀ դատարանների» բառը:
	5. Նախագծի 8-րդ հոդվածում հստակ սահմանել Պարետատան և պարետի իրավասությունները:	Չի ընդունվել	5. Նախագծով սահմանվում է, որ պարետատունն իրականացնում է արտակարգ դրության տարածքում արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող ուժերի և միջոցների միասնական ղեկավարումը: Այդ առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող մարմինների՝ ՀՀ ոստիկանության, ՀՀ ազգային անվտանգության ծառայության և պաշտպանության նախարարության լիազորությունները սպառիչ սահմանված են համապատասխան իրավական ակտերով, իսկ

			պարետատունը միայն պետք է իրականացնի վերջիններիս միասնական ղեկավարումը:
	6. Նախագծի 9-րդ հոդվածի		6.
	ա) 2-րդ մասի 3-րդ կետից հանել «անօրինական» բառը:	Չի ընդունվել	ա) Հարկ է նկատի ունենալ, որ նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը շարադրելիս հիմք է ընդունվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 224-րդ հոդվածով նախատեսված դրույթը:
	բ) 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերը հանել:	Չի ընդունվել	բ) Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովելու նպատակով կարող են օգտագործվել ոստիկանության, ազգային անվտանգության և պաշտպանության պետական լիազոր մարմինների ուժերն ու միջոցները: Իսկ Նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերով սահմանվում է, թե որ դեպքերում, ինչ կարգով և ինչ սահմանափակումների շրջանակներում զինված ուժերը կարող են մասնակցել արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանը: Առաջարկությունն ընդունվելու դեպքում ՀՀ զինված ուժերը կարող են ներգրավվել արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանը ցանկացած ժամանակ՝ առանց որևէ սահմանափակման, ինչը հակասում է օրինագծի հայեցակարգին:

	7. Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասում «, և պետք է լինեն համարժեք՝ հիշյալ նպատակների համեմատությամբ» բառերի փոխարեն գրել «բացառապես այնքանով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը՝ պայմանով, որ նման միջոցառումներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքով ստանձնած մյուս պարտավորությունների հետ:» բառերը:	Չի ընդունվել	7. Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ առաջարկությունն ըստ էության բովանդակային առումով ի սկզբանե ներառված էր նախագծի 10-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերում: Բացի այդ, գտնում ենք, որ նախագծում առկա խմբագրությունն առավել ընդունելի է, քանի որ առաջարկությունը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում կիրառվող իրավական տերմինաբանությանը:
	8. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում և մի շարք այլ օրենքներում նախատեսել համապատասխան բացառություններ՝ Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 12-րդ կետերի, ինչպես նաև Նախագծի այլ դրույթների իրականացման ապահովման համար:	Չի ընդունվել	8. Պարզ չէ, թե ինչ բացառությունների մասին է խոսքը, քանի որ նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 12-րդ կետերով սահմանված պահանջների խախտման համար քրեական պատասխանատվություն նախատեսված չէ: Նախագծին կից ներկայացված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 12-րդ կետերի խախտման համար նախատեսված է միայն վարչական պատասխանատվություն:
	9. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1.1-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1.1. Հատուկ նիստ գումարվելու պահից 3 ժամվա ընթացքում Ազգային ժողովի պատգամավորները	Ընդունվել է մասնակի	9. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի

	պարտավոր են ներկայանալ հատուկ նիստին:»:		փետրվարի 20-ի ՀՕ-308 օրենքի 42-րդ հոդվածում՝ 3) լրացնել 1.1-ին մաս հետևյալ բովանդակությամբ. «1.1. Եթե հատուկ նիստ գումարվելուց հետո 3 ժամվա ընթացքում քվորում չի ապահովվում, ապա նիստը սկսվում է անկախ քվորումի առկայությունից:», 4) լրացնել 3-րդ մաս հետևյալ բովանդակությամբ՝ «3. Արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանն ուղղված միջոցառումները քննարկվում են սույն օրենքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով, հետևյալ բացառություններով՝ հիմնական զեկուցմամբ հանդես է գալիս Հանրապետության Նախագահը կամ նրա ներկայացուցիչը, իսկ մշտական հանձնաժողովներից հանդես է գալիս մեկական ներկայացուցիչ: Հատուկ նիստն ավարտվում է Հանրապետության Նախագահի կամ նրա ներկայացուցչի եզրափակիչ ելույթով:»:
ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Վ. Հովհաննեսյան, Ա. Մինասյան, Ա. Ռուստամյան, Ա. Նռանյան	Ի. «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրինագծի. 1. 1-ին հոդվածում «իշխանությունը գրավելու փորձը» բառերը փոխարինել «իշխանությունը յուրացնելը» բառերը: 2. 2-րդ հոդվածում «հրամանագրով» բառից հետո	 Ընդունվել է մասնակի Չի ընդունվել.	 1. Նախագծի 1-ին հոդվածում «իշխանությունը գրավելու փորձը» բառերը փոխարինվել են «իշխանությունը զավթելու փորձերը» բառերով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի բովանդակության: 2. Գտնում ենք, որ արտակարգ դրության հետ

	լրացնել «Ազգային Ժողովի որոշմամբ» բառերը:		կապված հարաբերությունները կարող են կարգավորվել միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքերով:
	3. 6-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Արտակարգ դրության միջացառումները կարող են դադարեցվել կամ չեղյալ հայտարարվել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի որոշմամբ: Արտակարգ դրությունը համարվում է նաև դադարեցված, եթե Ազգային Ժողովի որոշմամբ դադարեցվել կամ չեղյալ են հայտարարվել արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով սահմանված բոլոր միջոցառումները»:	Ընդունվել է մասնակի	3. Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը շարադրվել են հետևյալ խմբագրությամբ. «2. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը իրավասու է չեղյալ հայտարարել արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանն ուղղված բոլոր կամ առանձին միջոցառումների իրականացումը: 3. Արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանն ուղղված բոլոր միջոցառումների իրականացումը չեղյալ հայտարարելու դեպքում արտակարգ դրությունը դադարեցվում է, իսկ առանձին միջոցառման իրականացումը չեղյալ հայտարարվելու դեպքում դադարեցվում է այդ միջոցառման հետագա իրականացումը:»:
	4. 7-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ «գործադուլների արգելում, իրավաբանական անձանց (բացառությամբ կուսակցությունների և զանգվածային լրատվամիջոցների) գործունեության կասեցում»:	Չի ընդունվել	4. Հարկ է նկատի ունենալ, որ նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասին 6-րդ կետով նախատեսվում է արգելել գործադուլների, ինչպես նաև իրավաբանական անձանց գործունեությունը կասեցնող կամ դադարեցնող այլ միջոցառումների իրականացումը, այլ ոչ թե արգելել կամ կասեցնել

			համապատասխան իրավաբանական անձանց գործունեությունը: Այդ առումով անհրաժեշտ է նկատի ունենալ նաև «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80-րդ հոդվածը, որով կարգավորվում են կուսակցությունների գործունեության կասեցման հետ կապված հարաբերությունները: Հիշյալ հոդվածի համակարգային վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ կուսակցությունների գործունեությունը կարող է կասեցվել միայն Սահմանադրական դատարանի որոշմամբ, մինչդեռ հիշատակված դրույթում խոսքը մասնավորապես անձանց կողմից կազմակերպվող գործադուլների արգելքի մասին է:
	5. 9-րդ հոդվածի 2-րդ մասում «Ոստիկանության, ազգային անվտանգության և պաշտպանության պետական լիազոր մարմինների» բառերը փոխարինել «Ոստիկանության և ազգային անվտանգության» բառերով:	Չի ընդունվել	5. Անհրաժեշտ է նկատի ունենալ, նախագծով հստակ նախատեսված է, որ պաշտպանության պետական լիազոր մարմնի ուժերն ու միջոցները արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովելու նպատակով կարող են օգտագործվել բացառապես այն դեպքերում, երբ արտակարգ դրության ժամանակ առաջացող խնդիրների իրականացումը հնարավոր չէ ապահովել ոստիկանության և ազգային անվտանգության պետական լիազոր մարմինների ուժերով:
	6. 9-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Սույն հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում նշված խնդիրների իրականացման համար կարող են ներգրավվել Հայաստանի Հանրապետության	Չի ընդունվել	6. Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հետ կապված հարաբերություններն արդեն իսկ կարգավորված են «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» 1998 թվականին

	փրկարար ծառայության ուժերը»: Նույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը հանել:		ընդունված օրենքով, որը պետք է կիրառվի ցանկացած արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում՝ անկախ արտակարգ դրություն հայտարարելու հանգամանքից:
	II. «Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին օրինագիծը լրացնել նոր հոդվածով հետևյալ բովանդակությամբ. «օրենքի 92-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ պարբերությամբ. «Հատուկ նիստի ժամանակ արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով նախատեսված միջոցառումները դադարեցնելու կամ չեղյալ ճանաչելու վերաբերյալ Ազգային Ժողովի որոշման նախագիծ կարող են առաջարկել Ազգային Ժողովի խմբակցությունները, պատգամավորական խմբերը կամ պատգամավորների առնվազը մեկ հինգերորդը: Սույն մասով նախատեսված որոշման նախագծերը քննարկվում են հատուկ նիստի ընթացքում սույն օրենքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով»:	Ընդունվել է մասնակի	II. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 20-ի ՀՕ-308 օրենքի 42-րդ հոդվածում՝ 5) լրացնել 1.1-ին մաս հետևյալ բովանդակությամբ. «1.1. Եթե հատուկ նիստ գումարվելուց հետո 3 ժամվա ընթացքում քվորում չի ապահովվում, ապա նիստը սկսվում է անկախ քվորումի առկայությունից:», 6) լրացնել 3-րդ մաս հետևյալ բովանդակությամբ՝ «3. Արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանն ուղղված միջոցառումները քննարկվում են սույն օրենքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով, հետևյալ բացառություններով՝ հիմնական զեկուցմամբ հանդես է գալիս Հանրապետության Նախագահը կամ նրա ներկայացուցիչը, իսկ մշտական հանձնաժողովներից հանդես է գալիս մեկական ներկայացուցիչ: Հատուկ նիստն ավարտվում է Հանրապետության Նախագահի կամ նրա ներկայացուցչի եզրափակիչ ելույթով:»:

Հայաստանի Հանրապետության կառավարություն	«Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ		
	1. Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասում «այն հանգամանքների առկայության դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգին անմիջական վտանգ է սպառնում» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգին անմիջական վտանգ սպառնալու դեպքում» բառերով», իսկ «անօրինական զինված խմբավորումների կազմակերպումը և գործունեությունը,» բառերից հետո լրացնել «արտակարգ իրավիճակները» բառերը:	Ընդունվել է	1.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	2. Նախագծի 3-րդ հոդվածի ա) 2-րդ մասում «հրամանագիրը ենթակա է» բառերը փոխարինել «հրամանագիրը, ինչպես նաև հրամանագրում կատարվող փոփոխությունները և լրացումները ենթակա են» բառերով,	Ընդունվել է	2. ա. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	բ) 4-րդ մասում «դեպքերում,» բառից հետո լրացնել «բացառությամբ իրավական ռեժիմի մեղմացման դեպքերի,» բառերը:	Ընդունվել է	բ. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	3. Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասը հանել:	Ընդունվել է	3.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	4.Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում	Ընդունվել է	4.Նախագծում կատարվել են համապատասխան

	«արտակարգ դրության տարածքում» բառերը փոխարինել «անձանց» բառով:		փոփոխություններ:
	5. Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հանել «գործունեությունը կանոնակարգող» բառերը:	Ընդունվել է	5.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	6. Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետից հանել «ՀՀ կառավարության կողմից» բառերը:	Ընդունվել է	6.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	7. Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «11) պարետային ժամի սահմանում, այսինքն՝ ամբողջ օրը կամ օրվա որոշակի ժամանակահատվածում առանց անձը հաստատող փաստաթղթերի և (կամ) հատուկ թույլտվության փողոցներում ու այլ հասարակական վայրերում գտնվելու արգելում, ինչպես նաև օրվա որոշակի ժամանակահատվածում փողոցներում ու այլ հասարակական վայրերում գտնվելու արգելում.»:	Ընդունվել է	7.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	8. Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետում «արգելում» բառից հետո լրացնել «հատուկ ռեժիմի սահմանում» բառերը:	Ընդունվել է	8.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	9. Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 16-րդ կետով հետևյալ բովանդակությամբ. «16) արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովման նպատակով՝ անհրաժեշտության դեպքում ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքի ու այլ միջոցների օգտագործում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով նյութական	Ընդունվել է	9.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

	փոխհատուցմամբ:»: 10. Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ մասում «բնականոն գործունեությունը» բառերից առաջ լրացնել «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի» բառերը:	Ընդունվել է	10.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	11. Նախագծի 7-րդ հոդվածի 5-րդ մասում «բնակիչ» բառից առաջ լրացնել «տվյալ տարածքի» բառերը:	Ընդունվել է	11.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	12. Նախագծի 7-րդ հոդվածը լրացնել 6-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «6. Սույն օրենքի իմաստով բնակիչ է համարվում տվյալ տարածքում հաշվառում ունեցող, ինչպես նաև հաշվառում չունեցող, սակայն տվյալ տարածքում բնակության որևէ ապացույց ունեցող անձը:»:	Ընդունվել է	12.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	13. Նախագծի 9-րդ հոդվածում լրացնել 6-րդ մաս հետևյալ բովանդակությամբ. «6. Զինված ուժերի այն զինծառայողները, որոնք կարող են ներգրավվել սույն հոդվածի 2-րդ մասում նշված խնդիրների իրականացմանն անցնում են հատուկ պատրաստություն՝ ՀՀ ոստիկանության կողմից այդ խնդիրների իրականացման համար անհրաժեշտ հմտությունների և մեթոդների վերաբերյալ և սույն հոդվածով սահմանված դեպքերում արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանը կարող են ներգրավվել միայն այդ	Ընդունվել է	13.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

	պատրաստությունն անցնելուց հետո::»: 14. Նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնց գույքն ու այլ միջոցներն օգտագործվել են արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովման նպատակով, իրավունք ունեն ստանալու համարժեք փոխհատուցում՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:»:	Ընդունվել է	14.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	15. Նախագծի 14-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովելու նպատակով ընդունված և ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակման հետ կապված իրավական ակտերը կիրառվում են միայն արտակարգ դրության գործողության ժամկետի ընթացքում և ուժը կորցրած են համարվում արտակարգ դրությունը դադարեցնելու պահից:»:	Ընդունվել է	15.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	16. Նախագծի 15-րդ հոդվածի 2-րդ մասը հանել:	Ընդունվել է	16.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Կ. Նահապետյան	«Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 9-րդ հոդվածում անհրաժեշտ է նախատեսել դրույթ, որով կգարգավորվեն զինված	Ընդունվել է	Նախագծի 9-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «4. Զինված ուժերի ներգրավումը պետք է առավելապես ուղղված լինի սույն հոդվածի 2-րդ

	ուժերի և ոստիկանության ու ազգային անվտանգության մարմինների ուժերի միջև փոխգործակցության և փոխօգնության հետ կապված հարաբերությունները:		մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով նշված խնդիրների իրականացմանը և ապահովվի ոստիկանության և ազգային անվտանգության մարմինների ուժերի հետ փոխգործակցության և փոխօգնության շրջանակներում:»: